«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

Առարկան՝ մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Սեդա Մխիթարյան

Ուսումնական հաստատություն՝ Խ. Սամուելյանի անվան թիվ 47 միջնակարգ դպրոց

Երևան 2023

Թեմա՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

Հատուկ հարց՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը հետազոտական աշխատանքների ընթացքում

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ .....էջ 4
Գլուխ 1.
Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործում..... էջ 6
Գլուխ 2.
Հետազոտական աշխատանքների կարևորությունը ուսուցչի գիտելիքների և հմտությունների կատարելագործման մեջ..... էջ 11
Եզրակացություն.....էջ 15
Գրականության ցանկ.....էջ 17

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի հանրակրթության ոլորտի վերջին տարիներին բարեփոխումների համատեքստում առաջատար խնդիր է համարվում ուսուցչի մասնագիտական կրթության որակի բարձրացումը: Ուսուցիչ, ով արագ կհարմարվի նորամուծություններին և նորարարություններին և դրա հիման վրա կկատարելագործի ուսումնադաստիարակչական գործընթացը՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և հասարակության կրթական պահանջմունքներին:

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն:

Ժամանակակից ուսուցչին ներկայացվող առաջնահերթ պահանջներից է մասնագիտական գիտելիքների և մանկավարժական կարողությունների առկայությունը, ուսուցչի համար առաջնային են նրա անձնային որակները, երեխաների նկատմամբ սերը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները: Ի.Պ.Պոդլասին առանձնացնում է մանկավարժական կարողությունների հետևյալ խմբերը՝ կազմակերպչական, դիդակտիկ, զգայական, հաղորդակցական, սուգեստիվ, հետազոտական, գիտական-ճանաչողական, որոնք ապահովում են ուսուցչի գործունեության արդյունավետությունը:

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Մասնագիտական և առարկայական հմտությունների կատարելագործմանը կնպաստեն մի շարք գործոններ՝ վերապատրաստումներ, տարբեր դասընթացների մասնակցություն, ստեղծագործական և հետազոտական աշխատանքների իրականացում և այլն:

Հետազոտության նպատակը. Այս թեմայով փորձում ենք կարևոր էլ հետազոտական աշխատանքի դեր ուսուցչի կատարելագործման գործընթացին: Հետազոտական աշխատանքի նպատակն է արժևորել մասնագիտական կրթության տեսության և մեթոդիկայի ուղղությամբ մանկավարժական հետազոտությունների կատարման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն սկսնակ ուսուցիչների մասնագիտական կայացմանը, մանկավարժական վարպետության ձևավորմանը, կրթական նոր տեխնոլոգիաների մշակման գործընթացին նրանց մասնակցությանը, որի շնորհիվ էապես կբարձրանա ուսման որակը:

Հետազոտության արդիականություն. Թեմայի արդիականությունը հանդիսանում է նրանում, որ կրթական բարեփոխումների հիմնական նպատակն է մեծ մասն իր մեջ պարունակում է հենց հետազոտական աշխատանքը: Հետազոտություն խթանում է քննադատական մտածողությունը, ստեղծագործական միտքը և դրա միջոցով ուսուցումն ակտիվանում է, այն նույնիսկ կարող է նպաստել պասիվ մասնագետների, նորարարությունների հանդեպ հետաքրքրասիրություն և նախաձեռնություն ձևավորել:

Գլուխ 1.

Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործում

Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուստի կարող ենք ասել, որ ՀՀ կրթական համակարգում հաղթանակներն ու պարտությունները կախված են այդ թվում նաև ուսուցչի աշխատանքից:

Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրա վառ ապացույցը սովորողների զանազան նվաճումներն ու ձեռքբերումներն են: Իսկ արգասաբեր գործելու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից:

Կրթության զարգացման ապահովման համար կարևոր է ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման այնպիսի տեխնոլոգիաների ներդրումը, որոնք հնարավորություն կտան բարձրացնելու ուսուցչի մասնագիտական գործունեության որակը և կատարելագործելու մանկավարժական վարպետությունը:

Վերջին տարիների օրենսդրական փոփոխությունները բավականին հստակություն են մտցրել ուսուցիչների կարգավիճակի, մասնագիտական զարգացման, ատեստավորման և տարակարգի շնորհման խնդիրների ոլորտում: 2009թ-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն Ուսուցիչը այն մանկավարժական աշխատողն է, որը

- դասապրոցեսի միջոցով ապահովում է ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը
- և անմիջականորեն պատասխանատու է այդ գործընթացի համար[1]:

[1] https://www.arlis.am/documentView.aspx?docID=71908, հոդված 3:

Օրենսդրական շատ կարևոր դրույթ է ամրագրված Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրում: Այդ ծրագրում նշվում է հետևյալը. միաժամանակ կստեղծվեն նպաստավոր պայմաններ առաջադեմ և ստեղծագործ մանկավարժների բացահայտման, խրախուսման, զարգացման և բարեփոխումների գործընթացներում նրանց ակտիվ ներգրավման համար[2]:

Միաժամանակ ՀՀ Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրի համաձայն, նախատեսվում է բարելավել կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին: Այս ամենին հասնելու համար հարկավոր է կատարելագործել ուսուցչի ժամանակակից մոտեցուները և մասնագիտական գիտելիքների մատուցման մեթոդները:

Մասնագիտական և առարկայական զարգացման կատարելագործումը իրենից ենթադրում է ակտիվ մասնակցություն մեթոդական միավորումներին, ուսուցիչների խորհուրդներին, սեմինարներին, գիտաժողովներին, վարպետության դասերի աշխատանքներին, ժամանակակից տիրապետում կրթական տեխնոլոգիաներին, մեթոդական տեխնիկային, մանկավարժական գործիքներին և իհարկե հետազոտական աշխատանքներին: Ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարելավման հարցի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում մասնագետների բարոյական արժեզրկման և գիտելիքների ու հմտությունների հնացման արագացող գործընթացով: Ամերիկացի գիտնականների կարծիքով՝ տարեկան թարմացվում է տեսական գիտելիքների 5%-ը և մասնագիտական գիտելիքների 20%-ը, որոնք պետք է տիրապետի մասնագետը: Մասնագիտական կոմպետենտությունը ուսուցչի որակյալ աշխատանքի ցուցիչներից է: Նրա մասնագիտական մակարդակի բարելավումը յուրաքանչյուր ուսուցչի առաջնահերթ պարտականությունն է:

Ներայումս ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետությունը կբարձրնա, եթե՝

- Բացահայտվեն սկսնակ ուսուցչի մասնագիտական գործունեության ոլորտում առկա թերությունները և նախանշեն դրանց վերացման ուղիները,

[2] http://www.mskh.am/sites/default/files/user/5/files/atestavorman_karg.pdf

- Ուսուցիչների մասնագիտական գործունեության կատարելագործումն իրականացվի տեսական մոտեցումների, հիմնադրույթների և համընդհանուր ձևերի կիրառման մեթոդաբանության վրա
- Մշակվեն և գործնականում կիրառվեն մանկավարժական այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն ուսուցիչների մասնագիտական կատարելագործման արդյունավետությունը,
- Կրթական հաստատությունում նախագծվեն և կիրառվեն ուսուցչի մասնագիտական կայացման և մանկավարժական գործունեության կատաելագործմանն ուղղված ուղեցույցներ:
- Կազմակերպվեն ուսուցիչների մասնագիտական կատարելագործման և որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք կտարբերվեն բովանդակությամբ, կազմակերպման ձևերով ու տևողությամբ՝ ըստ ուսուցչների կարիքների:

Միջազգային փորձը վկայում է, որ մասնագիտական զարգացման ազդեցիկ միջոց է դպրոցի ներսում ուսուցիչների համագործակցությունը: Այս մոտեցման դեպքում ստեղծվում են ուսուցչական խմբեր, որոնք համատեղ մշակում են դասի պլաններ, վարում և դիտարկում են դասեր, ապա կատարում դասերի վերլուծություններ: Նման դեպքերում ուսուցիչները առաջարկներ և դիտողություններ են ստանում իրենց գործընկերներից և հնարավորություն ունենում բարելավելու իրենց աշխատանքը: Այս առումով Հայաստանում ուսուցիչները շարունակում են մնալ որպես մեկուսացած աշխատողներ: Դրան նպաստում է այն հանգամանքը, որ ըստ Ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի դպրոցների շուրջ 31 40%-ը գտնվում են գյուղերում և հանդիսանում են այդ համայնքի միակ ուսումնական հաստատությունը: Բազմաթիվ առարկաների գծով դպրոցներում կան մեկական մասնագետներ:

Մասնագիտական և առարկայական հմտությունների զարգացման մեջ կարևոր է նաև ուսուցիչների ինքնակրթությունը: Ինքնակրթությունը մեթոդական աշխատանքի ինտեգրալ համակարգի կարևոր օղակն է, մանկավարժների կողմից երեխաների հետ աշխատելու մեթոդների և տեխնիկայի ինքնուրույն ընկալման բարդ և ստեղծագործ գործընթաց:

Քանի որ մասնագիտական կրթության ժամանակակից ուսումնական հաստատությունը բարդ, բարձր կազմակերպված հաստատություն է, անհրաժեշտ է մշտական մոնիտորինգ և ստացված արդյունքների վերլուծություն ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական կարողությունների բարելավման համար: Հենց

ուսուցիչն է տարբեր նորամուծությունները գործնականում իրականացնող գլխավոր դեմքը, և նոր պայմաններում իրեն առաջադրված խնդիրները հաջողությամբ իրականացնելու համար նա պետք է ունենա մասնագիտական կարողությունների անհրաժեշտ մակարդակ:

Ոսուցչի արհեստավարժության զարգացումն անհնար է դիտարկել առանց ուսուցչի ինքնակատարելագործման: Այս պարագայում առաջ է գալիս անձի մոտիվացիան, որը դիտվում է որպես գործոնների համակարգ, որոնք բնորոշում են մարդու վարքի ուղղությունը: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել ինքնակատարելագործման մոտիվացիա հանուն նոր գիտելիքների և մասնագիտական հմտությունների ձեռքբերման:

Մասնագիտական կոմպետենտությունը կոմպետենցիաների համալիր է, այն անձի ներքին հոգեբանական բաղադրիչների միասնական համակարգ է, որոնցում անպայմանորեն ներառվում են գիտելիքներն ու հմտությունները[3]: Մանկավարժական կոմպետենտություն ասելով՝ հասկանում ենք մասնագիտական գործունեության ընթացքում ուսուցչի տեսական և պրակտիկ գիտելիքների համակցումը: Ըստ Լ. Յու. Կիվցովի՝ «Մասնագիտական կոմպետենտությունը մասնագետի ինտեգրված հատկանիշ է ունեցած գիտելիքների, հնարավորությունների, կարողությունների մակարդակի հիման վրա, ինչն ուղենիշ է հանդիսանում դեպի մասնագիտական արհեստավարժություն»[4]:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը օրապահանջ է: Պատմական այս փուլում գիտատեխնիկական զարգացման պայմաններում պիտի փոխվեն նաև կրթությանը ներկայացվող պահանջները: Կրթությունն իրականացնող սուբյեկտը՝ մանկավարժն իր իմիջով խիստ տարբեր է նախորդ դարերի ուսուցիչներից: Այսօր աշակերտակենտրոն և փոխներգործուն ուսուցումը պահանջում է այլ որակի մասնագետ: Մանկավարժ, ով կարևորում է աշակերտի մտածողության զարգացումը, ուսուցման ժամանակ հենվում է աշակերտների կարծիքի վրա, փորձում է ավելի ակտիվ ուսուցում իրականացնել: Դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանակավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Ուսուցիչը կրթության բարեփոխումների առանցքային դեմքն է: Մասնագիտական իրավասությունը բարելավելու ուղղությամբ աշխատանքը պետք է

[3] Սարգսյան Ա., Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր, էջ 371-372:
[4] Նույն տեղում, էջ 370:

վերածվի մարդու անհատականության շարունակական զարգացման գործընթացի, դատողություններ անելու և տարբեր գործողություններ կատարելու նրա կարողության: Այն պետք է ուսուցչին ապահովի իր մասին ըմբռնումով, նպաստի աշխատանքի գործընթացում սոցիալական դերի կատարմանը: Ուստի կրթական ն հաստատությունում կրթության որակի կառավարման հիմնական միջոցը համարում ենք մասնագիտական կարողությունների կատարելագործման աշխատանքները: Կրթության որակը սոցիալական կատեգորիա է, որը որոշում է ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի արդյունավետությունը, դրա համապատասխանությունը հասարակության կարիքներին և ակնկալիքներին երեխաների զարգացման գործում և ուսուցիչների մասնագիտական կարողությունները:

Այսպիսով կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչը ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրատվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Գլուխ 2.

Հետազոտական աշխատանքների կարևորությունը ուսուցչի գիտելիքների և հմտությունների կատարելագործման մեջ

Հետազոտությունը համակարգված գործողությունների ամբողջություն, շարք, հաջորդականություն է, որի նպատակն է փաստերի բացահայտումն ու մեկնաբանությունը, վարկածների հաստատումը/հերքումը, տեսական և գործնական հայացքների վերանայումը: Մեծ մասամբ, հետազոտությունը որոշակի թեմայով կամ որոշակի երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման գործընթացն է:

Հետազոտություններն ըստ իրենց նպատակի դասակարգվում են՝ հետախուզական, նկարագրական ու բացատրական: Սա կախված է հետազոտվող հիմնախնդրի ուսումնասիրման աստիճանից:

Եթե հիմնախնդիրը նախկինում դեռ չեն ուսումնասիրել կամ շատ քչերն են այն ուսումնասիրել կամ հիմնախնդիրն ինքնին նոր է ի հայտ եկել, ապա, ամենայն հավանականությամբ, կիրականացվի հետախուզական հետազոտություն:

Եթե հիմնախնդիրը դեռևս ուսումնասիրված չէ այնքան, որ այն հնարավոր լինի հասկանալ ու նկարագրել, ապա կիրականացվի նկարագրական հետազոտություն, որը կօգնի տեսնել, հասկանալ, իմանալ հիմնախնդիրը:

Եթե հիմնախնդիրը հարկավոր է բացատրել՝ վերհանել դրա առաջացման պատճառահետևանքային կապեր, ապա կիրականացվի բացատրական հետազոտություն: Այսինքն, բացատրական հետազոտությունը նկարագրական հետազոտությունից առավել «առաջ է» անցնում՝ հասկանալու ու ներկայացնելու համար հիմնախնդրի ավելի խորքային առանձնահատկությունները[5]:

Ընդհանուր առմամբ, որպես ամենատարածված դասակարգում, առանձնացվում են որակական և քանակական հետազոտությունները: Դրանք տարբերվում են իրականացման տրամաբանությամբ ու սկիզբ են առնում հակադիր տեսական մոտեցումներից:

[5] Բալասանյան Ս., Վարդանյան Ն., ՔՀԿ հետզոտական կարողությունների գործնական զարգացման ուղեցույց, էջ 5:

Մանկավարժական հետազոտություններն էլ իրենց հերթին ըստ բնույթի և բվանդակության լինում են՝ հիմնարար, կիրառական և մշակումներ:

Հիմնարար հետազոտություններն նպատակաուղղված են տվյալ գիտության տեսական հայեցակարգերի, մեթոդաբանության մշակման ու զարգացմանը:

Կիրառական հետազոտություններն հիմնականում լուծում են գործնական խնդիրներ, հիմնվում են հիմնարար հետազոտության վրա:

Մշակումները հիմնվում են կիրառական հետազոտությունների, մանկավարժական առաջավոր փորձերի վրա և կիրառվում են գործնական ուսուցման ոլորտում[6]:

Մանկավարժական հետազոտության ընթացքում գործածվող հիմնական հասկացություններն են հետազոտության հիմնախնդիրները, թեման, արդիականությունը, նպատակը, առարկան, վարկածը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը գիտության ու պրակտիկայի համար, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Մանկավարժական հետազոտության մեթոդների դասկարգման մի քանի մոտեցումներ կան: Ընդհանուր առմամբ առանձնացվում են հետևյալ խնբերը.

- Գիտական հետազոտության համընդհանուր մեթոդն ուղղորդում է մտծողությունը, ունի ընդհանուր ճանաչողական գործառույթ: Համընդհանուր մեթոդի միջոցով ուսումնասիրվում են մանկավաժական երևույթների ու գործառույթների ծագումը, ձևավորումը, զարգացումը այլ երևույթների հետ ունեցած կապը:
- Հետազոտության մեթոդները, որոնք կիրառվում են մանկավարժության մեջ և ընդհանուր են մի շարք այլ գիտությունների համար:
- Մասնավոր մեթոդներ, որոնք բնորոշ են միայն գիտության տվյալ բնագավառին:

[6] Գևորգյան Լ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, էջ 11-12:

Մանկավարժական հետազոտությունների մի շարք մեթոդներ գոյություն ունեն.

- Էմպիրիկ մեթոդ է կոչվում փաստերի փաստերի հիմնական բնութագրիչների, դրանց միջև կապերի և հարաբերությունների,օբյեկտների, երևույթների, գործընթացի հատկանիշների վերաբերյալ գիտելիքները:
- Դիտումը որպես մանկավարժական տեղեկատվության կուտակման մեթոդ, մանկավարժական երևույթների և գործընթացների նպատակաուղղված համակարգված ընկալումն ու արձանագրումն է:
- Զրույցը հետազոտողի և հետազոտվողի երկխոսությունն է, ըստ նախօրոք մշակված ծրագրի:
- Հարցման մեթոդը կրառվում են՝ գրավոր, բանավոր միջնորդավորված, անմիջականորեն, հարցվողին ուղղված և այլն:
- Անկետավորումը հիմնված է մեծ թվով հետազոտվողների հարցման վրա, տեղեկատվություն ստանալու համար, հնարավորություն է տալիս բացահայտելու մարդկանց տեսակետը, վերաբերմունքը, դիրքորոշումը տարբեր իրողությունների վերաբերյալ:
- Հարցազրույց, որի յուրահատկությունն այն է, որ հետզոտողը նախօրոք որոշում է թեման և հիմնական հարցերը[7]:

Հետազոտական աշխատանքի կատարման համար հարկավոր է կատարել հաջորդական քայլերի շարք, որոնց պատշաճ իրականացումը կնպաստի հետազոտական աշխատանքի կատարման և ձևակերպման դրական արդյունքին:

- Թեմայի վերնագիրը անպայման պետք է մատնանշի հետազոտության կոնկրետ շրջանակը:
- Նպատակների ձևակերպում ևս շատ կարևոր քայլ է: Նպատակները պետք է հիմնավորեն, թե ինչո՞ւ է պետք այդ աշխատանքը կատարել, մատնանշեն հետազոտության իրականացման քայլերի ուղղվածությունը, ակնկալվող վերջնարդյունքները:
- Խնդիրների ձևակերպում, որտեղ բոլոր «կադրերը» պատճառահետևանքային կապերով կապված են միմյանց և ունեն նույն ուղղվածությունը, տանում են դեպի նույն նպատակակետը:

[7] Գևորգյան Լ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, էջ 27-30:

- Հետազոտության մեթոդաբանությունը ձևավորվում է նպատակների ու խնդիրների խառնուրդից: Դրա ձևակերպումը պետք է բավարարի ինչի՞ միջոցով, ի՞նչ ստանալ սկզբունքին:
- Աշխատանքի բովանդակություն, որը աշխատանքի հաջող իրականացման համար անհրաժեշտ է սկսելուց առաջ հստակ պատկերացնել բոլոր քայլերը, հետևաբար, նախնական բովանդակությունը ձևակերպել սկզբում:
- Ներածություն, որտեղ կարող են ներկայացվել թեմայի մասին ընդհանրական տեղեկություններ՝ թեմայի ընտրության կամ արդիականության հիմնավորումը, հետազոտության իրականացման նպատակները և այլն:
- Նյութի շարադրանք:
- Եզրակացություններ, որը պետք է վերլուծական դիտարկումներ պարունակեն աշխատանքի արդյունքների մասին:
- Օգտագործված գրականության ցանկ, որը լրացվում է ըստ հետազոտողին տրամադրված կանոնակարգի[8]:

Այսպիսով մանկավարժական հետազոտությունը թույլ է տալիս ուսուցչին կառուցել կրթության տեսություն, որը բացատրում է կրթական փաստերը: Այս հետազոտությունը գիտական մանկավարժական առաջընթացի ճանապարհն է՝ ընդդեմ կրթական առասպելների, որոնք չեն հաստատվում նվազագույն փորձարարական վերլուծությամբ: Մանկավարժական հետազոտությունը համարվում է արժեքավոր ուսուցման գործիք, որն ուժեղացնում է ուսումնական գործընթացը. Եթե ուսուցիչը օգտագործում է հետազոտություն պրակտիկայում, ապա այն բարելավում է իր կրթական գործունեության քննադատական արտացոլումը ուսումնական գործընթացում: Հետազոտություն խթանում է քննադատական մտածողությունը, ստեղծագործական միտքը և դրա միջոցով ուսուցումն ակտիվանում է, այն նույնիսկ կարող է նպաստել պասիվ մասնագետների, նորարարությունների հանդեպ հետաքրքրասիրություն և նախաձեռնություն ձևավորել:

[8] Ադամյան Ն.Վ., Հետազոտական աշխատանք կատարելու հիմնական պահանջներ և դրանց ուսուցման մեթոդիկա, էջ 531-539:

Եզրակացություն

Այսօրվա զարգացող հասարակությանը պետք են կրթված, բարոյական, նախաձեռնող անձինք, ովքեր տարբեր իրավիճակներում ունակ են համապատասխան որոշումներ կայացնել: Կրթական գործընթացում, որպես երաշխավոր, ինքնուրույն մտածողության ձևավորող ու գործունեության արդյունքների կանխատեսող հանդիսանում է ուսուցիչը: Հենց այդ պատճառով բարձրացել է պահանջարկը որակյալ, ստեղծագործական մտածողություն ունեցող, կոմպետենտ ու նախաձեռնող, մրցունակ ուսուցչի նկատմամբ, ով ունակ է արդի, դինամիկ աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած անձնավորություն: Ուսուցիչը պետք է գիտակցի իր սեփական մասնագիտական կարողությունները բարելավելու անհրաժեշտությունը: Իր մասնագիտական կարողությունները ձևավորելու համար ուսուցիչը պետք է շարունակի սովորել, ուրիշներին սովորեցնելու համար նա պետք է ընդունակ լինի ստեղծագործելու, ոչ ավանդական դասեր վարի: Ուսուցիչը պետք է ներգրավված լինի դպրոցի զարգացման կառավարման գործընթացում, ինչը նպաստում է նրա պրոֆեսիոնալիզմի զարգացմանը: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բաղադրիչները, ինչպիսիք են մանկավարժական մշակույթը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը, մասնագիտական որակները, գիտելիքները, կարողությունները և հմտությունները անընդհատ թարմացման և վերանայման կարիք են զգում: Ուսուցչի մասնագիտական որակի ապահովումը և բարձրացումը այսօր իրագործվում է հատուկ հիմնարկներում՝ մանկավարժական բուհերում, Կրթության ազգային ինստիտուտում: Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչը ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ: Փաստորեն ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում:

Սակայն շատ կարևոր է, որ ուսուցիչն ինքը գիտակցի սեփական մասնագիտական կարողությունները բարելավելու անհրաժեշտությունը: Սա

ենթադրում է մանկավարժական աճի համար մոտիվացնելու և բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտություն: Մասնագիտական կարողությունների զարգացումը մասնագիտական փորձի յուրացման և արդիականացման դինամիկ գործընթաց է, որը հանգեցնում է անհատական մասնագիտական որակների զարգացմանը, մասնագիտական փորձի կուտակմանը, որը ներառում է շարունակական զարգացում և ինքնակատարելագործում:

Առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման մի շատ լավ տարբերակ է նաև հետազոտական աշխատանքը: Հետազոտական աշխատանքն ուսուցչին հնարավորություն է տալիս բարձրացնել գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում:

Գրականության ցանկ

Ադամյան Ն.Վ., Հետազոտական աշխատանք կատարելու հիմնական պահանջներ և դրանց ուսուցման մեթոդիկա:

Բալասանյան Ս., Վարդանյան Ն., ՔՀԿ հետզոտական կարողությունների գործնական զարգացման ուղեցույց:

Գևորգյան Լ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն:

Սարգսյան Ա., Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր:

https://www.arlis.am/documentView.aspx?docID=71908, հողված 3:

http://www.mskh.am/sites/default/files/user/5/files/atestavorman_karg.pdf